

ՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ «Պռոշյան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների» կողմից
Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Արթուր Մուրադյանի կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 16.12.2016թ-ի թիվ 49 -Ն որոշմամբ

ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....
3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ
4. ՀՁԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....
5. ՀՁԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....
6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ.....

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Կոտայքի մարզի Պոռոշյան համայնքի 2017-2021թթ. Զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Կոտայքի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Պոռոշյան համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրեր իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ արտադրական կազմակերպությունների, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքի աշխատակազմի և Պոռոշյան համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 8-ի N 19-Ն որոշմամբ ստեղծված համայնքի ղեկավարին կից գործող « Պոռոշյան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարարական կարգով գործող խորհրդակցական մարմինների » (ԽՄ) հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2017-2021թթ. ՀԶԾ-ում ներառված են Պոռոշյան համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ, համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ,

աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ, համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացման նուղված միջոցառումներ : ՀԶԾ-ն ներառում է նաև Պոռոշյան համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Այն Պոռոշյան համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Պոռոշյանի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքի ամենօրյա փաստաթուղթը: ԽՄ-ը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխընթերցում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պողոջան համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի հարավ արևմտյան մասում: Արևելյան կողմից սահմանակից է Եղվարդ և Քասախ համայնքներին (սահմանի երկարությունը 6.6 կմ), հարավային կողմից սահմանակից է Արագածոտնի մարզի Սասունիկ և Աշտարակ համայնքին (սահմանի երկարությունը 9 կմ), հյուսիսային կողմից՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական համայնքին (սահմանի երկարությունը 4 կմ):

Պողոջան համայնքը երիտասարդ բնակավայր է: Հիմնադրվել է 1960-ական թվականներին՝ Երևան – Աշտարակ մայրուղու ձախ մասում՝ խամ ու խոպան հողերի վրա : Հիմնադրման պահին ընդգրկված է եղել Աշտարակի շրջանի վարչական տարածքում:

Հեռավորությունը քաղաքամայր Երևանից կազմում է 7կմ, մարզկենտրոնից՝ 70կմ, ՀՀ սահմանից 200կմ:

Պատմական տեղեկություններին համաձայն Պողոջան համայնքի տեղանունը ոչ մի անգամ չի վերանվանվել: Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1250 մետր, վարչական տարածքը կազմում է 2176.4 հա, աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները բարենպաստ է՝ քամիների միջին արագությունն է 5մ/վ: Համայնքի տարածքով անցնում են Երևան-Գյումրի ավտոմոբիլային ճանապարհները: Համայնքի պետական սեփականություն հանդիսացող և համայնքային ենթակայության ընդհանուր օգտագործման ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 5 կմ, որից 5 կմ միջպետական և հանրապետական նշանակության է: Համայնքի տարածքով անցնում է Մասիս-Նուռնուս երկաթգիծը, որի վրա են գտնվում Պողոջան կայարանը: Համայնքի տարածքում առկա են 1 ավտոճանապարհային, 1 երկաթգծի կամուրջներ

Համայնքի վարչական տարածքը -2176.4 հա է, որից՝

- o վարելահողեր – 679.69 հա
- o խոտհարք – 0 հա
- o արոտավայրեր – 271.0 հա
- o անօգտագործելի հողեր -186.54 հա
- o ձորեր -0հա
- o դաշտային ճանապարհներ-50հա
- o ավազի հանք-0 հա
- o արտադրական մաս /կովանոց/-4.1 հա
- o գերեզմանատուն -12 հա
- o տնամերձ հողեր -374.61 հա
- o դպրոց -1.5 հա
- o հուշարձան -0.3հա
- o գյուղամիջյան փողոցներ -3.0 հա
- o սեփականաշնորհված հողեր -1625.43
- o մեկ հողաբաժնի չափը -0.3960
- o պետական պահուստային հողեր -84.07 հա
- o համայնքի սեփականության հողեր -408.2 հա

Պոռոշյան համայնքի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 5465 մարդ (աղյուսակ1):

Աղյուսակ 1. Համայնքի մշտական բնակչության ու տնային տնտեսությունների ցուցանիշները (01.12.2016 թ. դրությամբ)

Ը/Ը	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	5465
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	1155
3.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	201

Համայնքի բնակչության 48 % կազմում են տղամարդիկ և 52% կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները (01.01.2016 թ. դրությամբ)

Ը/Ը	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	5465	2609	2856
	մինչև 1 տարեկան	67	36	31
	1-2 տարեկան	145	60	85
	3-4 տարեկան	166	94	72
	5-6 տարեկան	150	54	96
	7-10 տարեկան	360	167	193
	11-14 տարեկան	290	129	161
	15-17 տարեկան	199	90	109
	18 և ավելի տարեկան	4088	1979	2109
2.	Կենսաթոշակառուներ (ներառյալ հաշմանդամներ) այդ թվում՝	469	352	117
	Տարիքային և աշխատանքային	35	17	18
3.	Միակողմանի ծնողագուրկ երեխաներ	48	27	21
4.	Երկկողմանի ծնողագուրկ երեխաներ	1	1	0
5.	Հաշմանդամ երեխաներ	17	6	11
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	6	2	4
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	2	1	1
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	150	0	150
9.	Հաշմանդամներ	128	67	61
10.	Զբաղվածներ	1200	650	550
11.	Գործազուրկներ	2060	905	1155
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	201	118	83
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	7 և 1 անհայտ կորած	0	7 և 1 անհայտ կորած

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Պոռոշյան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 17-ի N 51-Ն որոշմամբ հաստատված 2016 թվականի բյուջեն եկամտային մասով կազմել է **121377.4** հազար դրամ, ծախսերի գծով՝ **121377.4** հազար դրամ, իսկ դեֆիցիտի գծով՝ **0** հազար դրամ: 2016 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է **32.9 %` 40226.1** հազար դրամ: Բնակչության հիմնական զբաղմունքը **հողագործությունն ու անասնապահությունն** է:

Համայնքում գործում են 23 առևտրի օբյեկտներ, որտեղ իրականացվում են սննդի , ոգելից խմիչների և ծխախոտի վաճառք:

Գործում է՝

4 հազուստի խանութ

2 դեղատուն

1 ավտոպահեստամասերի խանութ, որտեղ վաճառվում են ավտոպահեստամասեր և տեխնիկական հեղուկներ

7 ավտոտեխսպասարկման կետ, իրականացվում է ավտոմեքենաների անվադողերի վերանորոգում

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որը կառուցվել է 1983 թվականին :

2000 թվականին այն անվանակոչվել է Արցախյան պատերազմում զոհված, համայնքի բնակիչ՝ Պետրոս Ղևոնդյանի անունով: Դպրոցը վերջին տարիներին մասամբ վերանորոգվել է, ապահովված է ջեռուցման համակարգով: Դպրոցում սովորում են մոտ 690 աշակերտներ: Դպրոցական կրթությունը 12 ամյա է, դասավանդում են 54 ուսուցիչներ: Համայնքի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցը մշակույթի ասպարեզում ունի բարձր ցուցանիշներ: Դպրոցում կազմակերպվում են տոնական ցերեկույթներ, << Հայ Ասպետ>> մրցույթ բարձր դասարանցիների միջև: Դպրոցը մասնակցել է օլեմպիադաների, մարզային մրցույթների, <<Կենդուրու>> Հանրապետական մրցույթին և ունի բարձր առաջադիմություն: Դպրոցն ունի 75 աշխատողներ:

Համայնքում գործում է նախադպրոցական կրթության մեկ հաստատություն՝ <<Աստղիկ մ/մանկապարտեզ>> ՀՈԱԿ: Շենքը գտնվում է բարվոք վիճակում, վերանորոգված է, ապահովված է անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Պոռոշյանի մանկապարտեզ ՀՈԱԿ-ը ունի կրտսեր 1-ին խումբ, կրտսեր 2-րդ խումբ , կրտսեր նախադպրոցական խումբ և 1 ավագ խումբ, որտեղ հաճախում են 162 երեխա: Մանկապարտեզն աշխատում է 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, տրվում է երեք անգամյա սնունդ՝ նախաճաշ, ճաշ, ետճաշիկ: Պոռոշյան համայնքի ավագանու 2015 թվականի **դեկտեմբերի 17 -ի N 53-Ն** որոշման համաձայն մանկապարտեզում 2016 թվականի համար ծնողական վճարի չափը սահմանվել է յուրաքանչյուր երեխայի համար ամսական 6500 (վեց հազար հինգ) ՀՀ դրամ, ինչպես նաև ծնողական ամսական վճարների գծով սահմանվել են արտոնություններ: Մանկապարտեզն ունի 26 աշխատող:

Համայնքում գործում է <<ԱԱՊԿ>> ՊՈԱԿ, որի շենքը հիմնովին **վերանորոգված է, ունի ջեռուցման համակարգ և անհրաժեշտ պարագաներ** : <<ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ն աշխատում է 8 ժամյա աշխատանքային ռեժիմով, 2611 մարդ ստանում է բուժ սպասարկում : <<ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ն ունի

13 աշխատող՝ 3 ընտակեն բժիշկ, 7 ընտանեկան բուժքույր, 1 հաշվապահ, 1 օպերատոր և 1 սանիտար:

Պոռոջյան համայնքը ունի մշակույթի տուն: Շենքը գտնվում է կիսակառույց վիճակում, ապահովված չէ ջրով, ջեռուցման համակարգով:

Մշակույթի տանը գործում է գրադարան, այն ունի 9759 կտոր գիրք: Ընթերցողների թիվը կազմում է մոտ 780-800 որոնցից մեծամասնությունը դպրոցականներ են: Շենքային պայմաններ չունենալու պատճառով գրադարանը տեղափոխվել է համայնքապետարանի շենք:

Պոռոջյանի համայնքապետարանը ունի 17 աշխատող՝ 1 համայնքի ղեկավար, 1 համայնքի ղեկավարի տեղակալ, 10 համայնքային ծառայողներ, 5 տեխնիկական սպասարկման աշխատողներ: Համայնքապետարանում առկա Պոռոջյան համայնքի պաշտոնական կայքի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը եւ բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Համայնքապետարանում և գյուղի կենտրոնական հատվածներում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը: Բնակչության դերը համայնքի մշակութային ոլորտում բարձր է:

Համայնքում համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ և բնակիչների ներդրումներով կառուցվել է Մեծ Եղեռնի 100-ամյակի նվիրված հուշակոթող:

Համայնքում կառուցված է <<Զորաց>> պանթեոնը որտեղ հանգչում են Արցախյան պատերազմում զոհված հերոսների աճյունները: Ամեն տարի մայիսի 9-ին համայնքի ղեկավարի գլխավորությամբ համայնքի բնակիչները իրենց հարգանքի տուրքն են մատուցում զոհված նահատակների հիշատակին: Հուշարձանին դրվում են ծաղիկներ, ծաղկեպսակներ: Պանթեոնն ունի **մոտ 23** տարվա պատմություն և ենթակա է **կանաչապատման, վերանորոգման:**

Համայնքն ունի ԲՈՒՀ-ի ավելի քան 147 շրջանավարտ տարբեր մասնագիտություններով, որոնք կարողանում են օգնել համայնքի կրթության ու դաստիարակության մշակույթին, շինարարական աշխատանքներին:

Աղյուսակ 3-ում ներկայացված է վերը նշված ուսումնական հաստատությունում աշխատողների և սովորող երեխաների վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ 3. Պոռոջյան համայնքի միջնակարգ դպրոցի վերաբերյալ ցուցանիշներ

Հ/հ	Հաստատության անվանումը	Աշխատողների թիվը	Սովորողների թիվը
1.	<<Պետրոս Դևոնյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ	75	690

2.3 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառնություն: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, ծառայությունների եւ այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Պոռոշյանի Քաղաքաշտապանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքի ղեկավարը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են Քաղաքաշտապանության շտաբի առանձին ծառայությունները:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ:

2.4 ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների կատարման նպատակով՝ Լեռնանիստ համայնքի զարգացման քառամյա ծրագրում ներառել սեյսմիկ ռիսկերի նվազեցման հետևյալ միջոցառումները՝

- Ուսումնասիրել Պոռոշյան համայնքի հատուկ կարևորության օբյեկտները՝ համայնքապետարանի վարչական շենք, «Պոռոշյանի ԱԱՊԿ » ՊՈԱԿ, <<Պոռոշյանի Պետրոս Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ, էլ. էներգիայով սնուցող բարձր, միջին և ցածրավոլտ հզորության տրանսֆորմատորային կայաններ, ԱԻ-ի պայմաններում համայնքի կենսագործունեությունը ապահովող «Հայրուսզագարդ»-ի տարածքային ծառայություն և այլն, վերհանել դրանց սեյսմիկ խոցելիության ռիսկերը՝ հնարավորության դեպքում կիրառելով սեյսմիկ շինարարության նոր մեթոդներ :
- Ստեղծված արագ արձագանքման ուժերի միջոցով մշակել նորմատիվ փաստաթղթեր, որոշել համայնքի բազմաբնակարան շենքի սեյսմիկ խոցելիության աստիճանը՝ ներգրավելով սեյսմոլոգների և երկրաբանների:
- Ուսումնասիրել և վերհանել արտակարգ իրավիճակների ժամանակ ապաստարանների և թաքստոցների առկայությունը, նրանց տեխնիկական վիճակը, անհրաժեշտության դեպքում կազմել դրանց նկարագիրը և ներկայացնել առաջարկություններ հայտնաբերված թերությունների վերացման վերաբերյալ:
- Մշտական ուշադրության կենտրոնում պահել բնակչության իրազեկման և ազդարարման միջոցների սարքին և գործուն վիճակը, համայնքի կազմակերպություններում և բնակչության շրջանում պարբերաբար անցկացնել ուսուցումներ՝ երկրաշարժի և արտակարգ իրավիճակների ժամանակ նրանց ճշգրիտ և արհեստավարժ գործողությունների վերաբերյալ”

2.5 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

- Համայնքում ամեն տարի ընդլայնվում է լուսավորության ցանցը: 2015-2016 թվականների ընթացքում համայնքի լուսավորության ցանցը 1.5 կմ ընդլայնվել է: Նախատեսված է հնարավորինս սահմաններում լուսավորության ցանցը ավելացնել ևս 2 կմ երկարությամբ:
- Համայնքում կատարվել են մոտ 1 կմ երկարությամբ ասֆալտատում: Ներհամայնքային ճանապարհների մոտ 5 կմ երկարությամբ ճանապարհները կարիք ունեն ընթացիկ և կապիտալ բարեկարգման: 2013-2016թթ ընթացքում կատարվել են համայնքի դաշտամիջյան և գյուղամիջյան ճանապարհների հարթեցման և խճապատման աշխատանքներ:
- Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավվում է համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը գտնվում է ծաղկման շրջանում և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկն է: Բարեփոխումներ կատարելով՝ նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

- Բնակիչներին ապահովել աշխատատեղերով
- զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունն համայնքում
- կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին
- ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի ֆինանսական իրավիճակը վերլուծելիս պետք է հստակ տարանջատել՝

- Համայնքի բյուջեն (եկամտային և ծախսային մասերով),
- Ծրագրերի իրականացման համար համայնքներին հասանելի այլ միջոցներ (աղբյուրներ և ծախսային ուղղություններ):

Համայնքի ֆոնդային բյուջեի մուտքերը, կարելի է ասել, հիմնականում ձևավորվում են վարչական բյուջեի միջոցների տարեվերջի մնացորդի հաշվին և **հիմնականում հողի նպատակային նշանակության փոփոխությանը**: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2016թ.՝ 54.5%, 2017թ.՝ 65.1%, 2018թ.՝ 67.5%, 2019թ.՝ 66.9%, 2020թ.՝ 66.6%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին (աղյուսակ 4):

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր միայն կանխատեսվում են 2017թվականի համար, ապա պլանավորվող մնացյալ չորս տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին :

Աղյուսակ 4. Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. փաստացի 01.10.2016	2017թ. կանխ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	146334.2	113543.1	139099.6	121926.3	123026.3	123798.5	124982.8
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	117099.2	86343.5	122859.6	118526.3	119426.3	120198.5	121382.8
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	28040.2	21138.2	32312.0	31343.5	32243.5	33015.7	34200.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	11006.6	4656.8	18159.2	18815.7	19315.7	19815.7	20500.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	2445.8	1227.1	8543.5	8900.0	9100.0	9300.0	9500.0
	Հողի հարկ	8560.8	3429.7	9615.7	9915.7	10215.7	10515.7	11000.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	15165.9	14913.4	12027.8	12527.8	12927.8	13200.0	13700.0
	Գույքահարկ	15165.9	14913.4	12027.8	12527.8	12927.8	13200.0	13700.0

	փոխադրամիջոցների համար							
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	1867,8	1568.0	2125.0	2185.0	2205.0	2230.0	2240.0
	Տեղական տուրքեր	1867,8	1568.0	2125.0	2185.0	2205.0	2230.0	2240.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր							
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	82654.5	61925.3	81876.4	80000.0	80000.0	80000.0	80000.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	82654.5	61406.6	81876.4	80000.0	80000.0	80000.0	80000.0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	82654.5	61406.6	81876.4	80000.0	80000.0	80000.0	80000.0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ		518.7					
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (տուրվենցիաներ)							

դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	6404.5	3279.9	8711.2	7182.8	7182.8	7182.8	7182.8
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	894.9	831.8	1332.8	1332.8	1332.8	1332.8	1332.8
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	894.9	831.8	1332.8	1332.8	1332.8	1332.8	1332.8
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր							
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում							

	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	Վարչական գանձումներ	894.6	565.9	1778.4	1850.0	1850.0	1850.0	1850.0
	Տեղական վճարներ	894.6	565.9	1778.4	1850.0	1850.0	1850.0	1850.0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ							
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից							
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ							
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*	46.15.0	1882.3	5600.0	4000.0	4000.0	4000.0	4000.0
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող							

	հասկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	4615.0	1882.3	5600.0	4000.0	4000.0	4000.0	4000.0
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	6467.5	16735.6	15000.0	2500.0	2500.0	2500.0	2500.0
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	721.3						
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	721.3						
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2	Պաշարների իրացումից մուտքեր							
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							
4	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	5746.2	16735.6	15000.0	2500.0	2500.0	2500.0	2500.0
	Հողի իրացումից մուտքեր	5746.2	16735.6	15000.0	2500.0	2500.0	2500.0	2500.0
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	22777.5	10424.0	1200.0	900.0	1100.0	1100.0	1100.0
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	22777.5	10424.0	1200.0	900.0	1100.0	1100.0	1100.0
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-բյուջետային փոխատվությունների ստացում							

	-ստացված փոխատվությունների գումարի մարում							
2	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	22777.5	10424.0	1200.0	900.0	1100.0	1100.0	1100.0
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն							
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							
2.2	Փոխատվություններ							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	22777.5	10424.0	1200.0	900.0	1100.0	1100.0	1100.0
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս							
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս							

2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում										
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը										
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ										
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ										
1.1	Արժեթղթեր										
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր										
	-հիմնական գումարի մարում										
1.2	Վարկեր										
	-վարկերի ստացում										
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում										
1.3	Փոխատվություններ										
	-փոխատվությունների ստացում										
	-ստացված փոխատվությունների գումարի մարում										

*)Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

Աղյուսակ 4. Համայնքի 2017-2021թթ. բյուջեն (եկամտների և ծախսերիկանխատեսումը)

Եկամտի և ծախսի տեսակը	2015թ. տարեկանական	2017թ. կանխ.	2015թ. փաստ.նկատ. %	2018թ. կանխ.	2015թ. փաստ.նկատ. %	2019թ. կանխ.	2015թ. փաստ.նկատ. %	2020թ. կանխ.	2015թ. փաստ.նկատ. %	2021թ. կանխ.	2015թ. փաստ.նկատ. %
Ընդամենը եկամուտներ	193236.5	139455.6	119.1	121926.3	83.3	123026.3	84.1	123798.5	84.6	124982.8	85.4
Հարկայինեկամուտներ, որից	28400.0	30187.0	115,3	31343,5	119,6	32243.5	123.2	33015.7	126.1	34200.0	130.7
Հողի հարկ	9000.5	9615.7	112.3	9915.7	115.8	10215.7	119.3	10515.7	122.8	11000.0	128.5
Գույքահարկ	19400.0	20507.1 3	116.8	21427.8	121.6	22027.8	125.1	22500.7	127.8	23200.0	131.7
Տեղական տուրքեր	1855.0	2125.0	114.5	2185.0	113.8	2205.0	118.1	2230.0	119.4	2240.0	119.9
Պաշտոնական ընթացիկ դրամաշն.	82677.5	81876.4	99%	80000.0	96.8	80000.0	96.8	80000.0	96.8	80000.0	96.8

Այլ եկամուտներ	5500.0	8711.2	136.8	7182.8	112.2	7182.8	112.2	7182.8	112.2	7182.8	112.8
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	520260	15000.0	28.8	2500.0	43.5	2500.0	43.5	2500.0	43.5	2500.0	43.5
Տարեսկզբից առնաձայն	22777.5	1556.0	6.8	900.0	3.9	1100.0	4.8	1100.0	4.8	1100.0	4.8
Ընդամենը											
Ընդամենը ծախսեր	193236.5	139455.6	102.7	121926.7	89.7	123026.3	90%	123798.5	91.2	124982.8	92.1
Ընթացիկ ծախսեր, այդ թվում	193236.5	122899.6	104.6	118526.3	100.0	119426.3	101.9	120198.5	105.6	121382.8	106.6
Տեղ. ինքնակառ. մարմնի, դրանց ենթ-հիմն. աշխատ. աշխատավարձ	44000.0	44900.0	98.9	44900.0	98.9	45800.0	100.9	45800.0	100.9	45800.0	100.9
Ապրանքն. գնմանն ծախս. վճ. ծախս	25746.0	27798.6	186.4	21626.3	145.4	21626.3	145.4	22398.5	150.6	22398.5	150.6
Սուբսիդիաներ											
Դրամա-շնորհներ	38687.0	41571.0	95.2	42000.0	96.1	42000.0	96.1	42000.0	96.1	43189.3	98.8
Սոցիալական նպաստներ	10000.0	8700.0	87.6	10000.0	100.6	10000.0	100.6	10000.0	100.6	10000.0	100.6
Այլ ծախսեր											
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում											
Հիմնական միջոցներ	74803.5	16556.0	75.9	3400.0	15.6	3600.0	16.5	3600.0	16.5	3600.0	16.5

2.7 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման առկա դժվարությունները ըստ ուղղությունների ներկայացված են ստորև.

1. Համայնքում խմելու և ռոտզման ջրի ցանցի հետ կապված նոր զարգացող թաղամասերում ունենք կառուցման խնդիրներ:
2. Համայնքում առկա է կոյուղու ցանցի վերանորոգման խնդիր, որը խիստ անհրաժեշտ է վերանորոգել:
3. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում՝ երիտասարդության ներգրավմամբ,
4. Համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը նպաստող, սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարության իրականացում, հանգստի գոտիների ստեղծում,

2.8 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ , ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈւԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Զարգացման համար համայնքն ունի բավարար մասնագիտական ներուժ, ավելի քան 147 ԲՈՒՀ-ի շրջանավարտներ , տարբեր մասնագիտություններով, որոնք կարողանում են օգնել համայնքի կրթության ու դաստիարակության մշակույթին, շինարարական աշխատանքներին:
- ✓ Համայնքը մոտ է գտնվում մայրաքաղաքին / մոտ 7կմ/ ,
- ✓ Երևան - Պոռոչյան ճանապարհի լավ վիճակը,
- ✓ Համայնքի իրականացվող աղբահանությունը, որը համայնքը զերծ է պահում արհից, թափոններից, ինչի պատճառով ունենք մաքուր և բարեկեցիկ համայնք:
- ✓ Համայնքի տարածքում գործող առևտրի օբյեկտների, հացի արտադրության առկայությունը,
- ✓ Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը:
- ✓ Համայնքում առկա է Պետական սեփականություն հանդիսացող հողակտոր և շինություն(Պաշտպանության նախարարության նախկին շենքը), որը կարելի է օգտագործել որևէ գերատեսչության կամ հյուրանոցային, առևտրային համալիրներ և որն կաշխուժացնի համայնքի կյանքը և կկրճատի գործազրկությունը:

➤ Համայնքի աշխարհագրական դիրքը բարենպաստ է հեռանկարային զարգացման համար: Պոռոչյան համայնքը տեղաբաշխված է մայրաքաղաք Երևանից 7 կմ հեռավորության վրա:

